

Մշակութային և Հասարակական  
Երկշաբաթաթերթ

# Հոյս

1800 թուման  
Հայաստանում՝ 320 դրամ



## ՈՒՆԵՑԵՆ ԵՆՔ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

**ՆԱԿԵՏԱԿԱՆ  
ԱՅՍՍՏԱՆ**

# Յոյս

Երկշաբաթաթերթ

6-րդ տարի, թիւ 135, 21 Նոյեմբեր 2012,  
1800 թուման  
Հայաստանում՝ 320 դրամ



## ԱՅՍ ԶԱՄԱՐՈՒՄ

- 2 Կայացան ԹՅԹ Պատգամաւորական ժողովի ընտրութիւնները
- 4 Անունը կամ, յուսանք, որ ամանումս էլ լինի  
Ազատ Մաթեան
- 5 Ամենամեծ վտանգը համայնքի կեանքում  
Ռուբիկ Սարգսրեան
- 6 Նալբանդեանը մերժում է Ադրբեջանի «Ճանապարհային քարտեզը»  
Վ. Պողոսեան
- 7 Ռուսաստանը Ադրբեջանում իշխանափոխութիւն է ծրագրում  
Յեղինէ Բունիաթեան
- 15 «Մերձաւոր արեւելքի «դեմոկրատացման» նախագիծը» յօդուածի մասին  
Լեւոն Ահարոնեան
- 18 Անիի վերականգնումը  
Գայանէ Աբրահամեան
- 20 Փարթորը՝ Քաղաքային մարզածել լուսանկարները՝ Անի Ղելիչեան
- 22 Խոհանոց՝ Գարու սուլի
- 23 Կոսմետիկը եւ մեր առողջութիւնը  
Քաթրին Եաղուբի

Նոյեմբեր 29-ը՝ Հայաստանի երկրորդ հանրապետութեան հռչակման օր

- 8 Մկրատել սովետական շրջանի պատմութիւնը հնարաւոր չէ  
Ռոբերթ Սաֆարեան
- 10 Հայ կոմկուսի ղեկավարները
- 12 Հայաստանը «Սովետական Հայաստան» ամսագրի էջերում
- 13 Հայերը երկրորդ համաշխարհային պատերազմում  
Վահէ Անթանեսեան

## Պարսկերէն բաժին

- |                                    |   |   |
|------------------------------------|---|---|
| 2 Այս համարի հայերէն էջերում       | 6 Արաքսի ափին Նոր էլեկտրակայան<br>Թուրաջ Խոսրուաի | 10 Չրոյց երիտասարդ նկարիչ Կարինէ Չոհրաբիի հետ<br>Անի Ղելիչեան |
| 4 Հանդիպում մշակոյթի նախարարի հետ  | 7 Բանաստեղծութիւններ Տաթև                         | 12 Ազատ Մաթեանը ըստ Ազատ Մաթեանի (բ. մաս եւ վերջ)             |
| 5 Բաղանիքի յայտնաբերում արտաշատում | 8 Նորավանքը լուսանկարները՝ Վահէ Ահարոնեան         |   |

### Յոյս

Հասարակական-մշակութային երկշաբաթաթերթ

### Արտօճատը՝

Լեւոն Ահարոնեան

### Խմբագիր՝

Ռոբերթ Սաֆարեան

### Խմբագրական կազմ՝

Լիա Խաչիկեան,  
Գարուն Սարգսեան,  
Արմինէ Մելիք-Իսրայելեան

### Գեղարւեստական ձեւաւորում՝

Լիա Խաչիկեան

### Գովազդ

Անի Ղելիչեան

### Կայք

Քաջիկ Սաֆարեան  
Մարզական  
Արման Տէր Ստեփանեան

### Բաժանորդագրութիւն

Քաթրին Եաղուբի

### Հասցէ՝

Թեհրան, Ջամ պողոտայ,  
համար 18, բնակարան 1  
88300472 88825521

hooyes@inbox.com

www.hooyes.com



## ՆՈՅԵՄԲԵՐԻ 16-ԻՆ ԿԱՅԱՑԱՆ ԹԵՐԻԱՆԻ ՊԱՏՊԱՄԱԴՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՆՈՐ ՊԺ-ՈՒՄ ԽՄԲԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԸ ՄՆՈՒՄ Է ՆՈՅՆԸ

«ԱՆԿԱԽՆԵՐ»-Ի ՅԱՂԹԱՆԱԿԸ ՄԱԶԻԴԻԵՈՒՄ



Ուրբաթ նոյեմբերի 16-ին կայացան Թեհրանի հայոց թեմի պատգամաւորական ժողովի ընտրութիւնները: Նախնական արդիւնքների համաձայն, ընտրութիւններին մասնակցեցին 57000 մարդ:

Թեհրանի ՊԺ-ի տեղերը ձեռք բերելու համար մրցակցում էին հիմնականում երէք ցանկ՝ Ղաշնակցութեան համակրող միութիւնների ցանկը «Նոր հայեացք, կայուն համայնք» լոզունգով, «Րաֆֆի» համալիրի, «Արաքս» շաբաթաթերթի եւ «Աշխարհատեսների հայկական կենտրոն»-ի ցանկը, եւ «Անկախ թեկնախուների միասնական ցանկը»: Վերջիններս, կարողացել են Ջէյթուն (Մաջիդիէ) քաղաքամասում ձեռք բերել 6 տեղ: Սասուն քաղաքամասի նախնական արդիւնքների համաձայն «Րաֆֆի-Արաքս»-ի թեկնածուներից երեքից վեցը մուտք կը գործեն Պատգամաւորական ժողով: Միւս ընտրատարածքներում յաղթել են Ղաշնակցական ցանկի թեկնածուները: մատնանշելի է, որ շրջաններում եւ որոշ քաղաքամասերում գոյութիւն չունի լուրջ մրցակցութիւն եւ թեկնածուները պատգամաւոր են դառնում չնչին քանակութեամբ ձայներով:

Վերջնական արդիւնքները եւ դրանց վերլուծութիւնը կարողա «Յոյս»-ի յաջորդ համարում:






## ԵՐԵՎԱՆՈՒՄ ԼՈՅՍ Է ՏԵՍՆԵԼՈՒ «ԻՐԱՆԱՅԱՅՈՑ ՉԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ»-Ի ՉԱՅԵՐԷՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ



Մեր ընթերցողին արդեն ծանօթ է ժանետ Լազարեանի կազմած «Ղանեշնամէյէ իրանեանէ արմանի» (دانشنامه ایرانیان ارمنی) գիրքը: Ուրախութեամբ տեղեկացել ենք, որ այդ գրքի հայերէն տարբերակը՝ ժորժ Աբրահամեանի թարգմանութեամբ եւ Լիա Իւանեանի խմբագրութեամբ, շուտով լոյս է տեսնելու Երեւանում: Գիրքը միատեղ հրատարակութիւնն է ՀՀ Մշակոյթի նախարարութեան եւ Հայաստանի Հանրապետութիւնում Իրանի դեսպանութեան մշակոյթի կենտրոնի: «Իրանահայոց հանրագիտարանը» լոյս է տեսնում ժանետ Լազարեանի վաղեմի ընկեր՝ իրանահայ բարերար Լեւոն Ահարոնեանի մեկենասութեամբ:

Գրքի ենթավերնագիրն է «Անւանի իրանահայերի կենսագրականները»: Դրա երեսուն բաժիններում, որոնք ընդգրկում են 1604-2012 թականները, ներկայացւած են 550 անւանի իրանահայեր՝ հոգեւորականներ, խորհրդարանի պատգամաւորներ, մտաւորականներ, արւեստագէտներ, մարզիկներ, երգիչներ եւ այլն:

Ժանէտ Լազարեանից ստացած տեղեկութիւնների համաձայն, Հայաստանում Իրանի դեսպանութեան մշակութային կենտրոնը մեծ կարեւորութիւն է տալիս «Իրանահայերի հանրագիտարանը» գրքի հրատարակմանը եւ նոյնիսկ յետագայ իր օրակարգի մէջ գտնուող երկու այլ ծրագրեր, դրա հրատարակութիւնը մինչեւ տարեվերջ իրականացնելու համար:



## ԱՆՈՒՆԸ ԿԱ՛, ՅՈՒՍԱՆՔ, ՈՐ ԱՄԱՆՈՒՄՆ ԷԼ ԼԻՆԻ

Ազատ Մայրամաս

Եթե ուզում էք ամբողջական գաղափար կազմել այն ամենի մասին, ինչը պակասում է մեզ՝ հայերիս, ապա մի պահ ուշադրություն դարձրեք հայ կուսակցությունների անուններին: Չէ որ կուսակցությունները կոչված են ի կատար ածելու ժողովրդի երազանքները, այսինքն այն, ինչ չկա, բայց պետք է հաստատ, որ լինի: Սկսենք այսօր արդեն «ավանդական» համարվող կուսակցություններից:

«Հայ Հեղափոխական Դաշնակցություն». Ներկա վիճակով այս կուսակցությունը ոչ կարողանում է հեղափոխություն անել, ո՛չ էլ մի այլ, հեղափոխական, թե պահպանողական, իշխանամարտ, թե իշխանամետ կուսակցության հետ դաշնակցել: Ասված է, որ երկու տիրոջ միաժամանակ ծառայել չի լինի, պարզվում է, որ երբեմն մեկին ծառայելն էլ է դժվարանում: Մնում է , ոչ թե ինչ որ մեկին ծառայել, այլ ամբողջին տիրել: Բայց ինչպե՞ս, այս է խնդիրը:

«Ռամկավար ազատական». Ազատականը դա հաստատ նույն լիբերալն է, իսկ ռամկավա՞րը, սա էլ երկի դեմոկրատն է, որը պիտի թարգմանվեր ժողովրդավար, իրականում այս կուսակցությունը, ո՛չ մի կապ չունի ռամիկների ազատության հետ, այլ հարուստ ու պահպանողականների կուսակցություն է:

«Սոցիալ Դեմոկրատ Հնչակյան». Դէ, պարզ է, որ սոցիալ դեմոկրատները մարքսիստ են, իսկ հնչակը նույն զանգն է, բայց այս կուսակցության զանգը, չգիտես ինչու, իր մյուս երկու «գործընկերների» համեմատությամբ ամենամեծը հնչողությունն ունեցավ հայի ականջին: Պատճառը գուցե այն է, որ հայի ականջը էնքան էլ հարմարեցված չէ մարքսիստական «հնչակի» ղողանջներին:

«Հայաստանի Կոմունիստական Կուսակցություն» (դէ, սա էլ արդեն ավանդականների շարքը անցնելու վրա է, եթէ, իհարկե՛ իրենց շարքում տեղ տան նրան): Սրա վիճակը հնչակյանների մասին ասվածի ավելի վառ ապացույցն է: Սրանք ամբողջ 70 տարի հայ ժողովրդի գլխին համայնավարություն քարոզեցին, բայց հայաստանցիք, կողը դեմ տված, մինչև վերջ էլ երկրի ղեկավարին, նույնիմբ ՀԿԿ առաջին քարտուղարին ասում էին թագավոր: Իսկ ողջ Խորհրդային Միության առաջին քարտուղարին, պիտի ենթադրել, որ համարում էին կայսր:

Գալով Հայաստանի նորաթուխ կուսակցություններին, քանի որ դրանց ճշգրիտ ոչ թիվը, ոչ բոլորի անունն ու գաղափարախոսությունն է մեզ հայտնի, խոսենք գլխավորների մասին:

«Հայաստանի Հանրապետական Կուսակցություն». Հանրապետական բառի իմաստն էլ շատ պարզ չէ, չես հասկանում դա նշանակում է, որ հանրությունը պիտի իշխի, թե հանրության վրա պիտի իշխել: Այ-

սօրվա վիճակով կարծես գործում է երկրորդ մեկնաբանությունը: «Հանրապետական»ի նախագահը Հայաստանի այսօրվա միապետը կամ, որ միևնույնն է, թագավորն է, անկախ այն բանից ժողովուրդը նրան այդպես կոչում է, թե ոչ:

«Բարգավաճ Հայաստան». Այս անունը լիովի համապատասխանում է, թէ կուսակցության ղեկավարի անձնական բոյ-բուսաթին, և թէ, տերն անպակաս անի, գրպանին: Ղեկավար, որը ամենայն բարեհոգությամբ և ի խորոց սրտի ցանկանում է ստեղծել Հայաստան, ըստ պատկերի յուրում, ինչպես երկնային տերը ստեղծեց մարդուն իր պատկերով: Իսկ դրան հասնելու համար հարկավոր է նախ դառնալ նվազագույնը Հայաստանի երկրային տեր թագավորը: Պր. Ծառուկյանի ձակատին էլ կարծես այդ է գրված:

«Օրինաց երկիր». Սա, իր գրաբար ձևով հիշեցնում է Մովսես Մարգարեի խոստացած «Ավետյաց երկիր»ը: Մեկնաբանությունը թողնում ենք Հայաստանում օրենքի ուժը ճաշակած հայրենակիցներին:

«Ժառանգություն». Անուն, որը նույնպես ակունք է առնում կուսակցության սփյուռքահայ ղեկավար Ռաֆֆի Հովհաննիսյանի անձնական կարգավիճակից, մարդը ամեն գնով ուզում է իրեն զգալ ողջ Հայաստան աշխարհի լիարժեք տեր ու ժառանգ: Այս բարդույթից ձերբազատվելու միակ ճանապարհն էլ հայոց թագավորների գահին բազմելն է, որի տիրելու վճռակամության մասին նա արդեն հայտարարել է:

«Արժանապատիվ ապագա». ինչքան գիտեմ, արժանապատվորեն ինքնալուծարք է հայտարարել, բայց անուն ընտրելու մեջ էլ ամենաապատվարժանը հենց սրան պիտի համարել, որովհետեւ մարդիկ ուղղակի հայտարարում են, որ ներկա վիճակում արժանապատվությունից խոսելը անիմաստ է, և որ այն պիտի թողնել անհայտ ապագային:

«Անունը կա, ամանունը չկա:» ժողովուրդը այս առածը կարծես հենց իր հարազատ ծոցից ծնունդ տված կուսակցությունների համար է ասել:

Իսկ, որպեսզի ամանունն էլ մի բան լինի, մեզ հարկավոր են իսկական ընկերվարների, ռամկավարների, ժողովրդավարների, համայնավարների, հանրապետականների, մեկ խոսքով իսկական հեղափոխականների ճշմարիտ դաշնակցություն, և եթե մի քիչ էլ ճանաչենք սփյուռքահայերի ժառանգական իրավունքները, որպես հայ մեծ ընտանիքի անդամներ, այն ժամանակ ազգովին կբարգավաճենք, կունենանք օրինաց երկիր և շատ մոտ ապագայում կապրենք արժանապատիվ կյանքով:

Հավատա՞նք, որ...: Բայց հուսալ և երազել միշտ էլ կարելի է:

# ԱՄԵՆԱՄԵԾ ՎՏԱՆԳԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԵԱՆՔՈՒՄ

Ռուբիկ Սարգսյան

## ՊԱՏԱՍԽԱՆԱՏԻՈՒԹԻՒՆ ՅԱՆՁՆ ԱՌՆԵԼՈՒ ՅԱՆԿՈՒԹԻՒՆԸ ՆԻԱԶԵԼ Է

Մենք՝ բոլորս, երբեմն այնքան ենք տարած մեր նեղ միութենական կամ ներքին նեղ շրջանակների հարցերով, որ մոռանում ենք, թե որն է մեր համայնքային կեանքի առաջընթացի հիմնական սպառնալիքը: Դա մեր համայնքի անդամների զանգածային անտարբերությունն է համայնքին վերաբերող որևէ գործին պատասխանատուությամբ լծելու հարցում: Սա մասամբ հետևանք է ազգային իշխանության և միութենների վարած քաղաքականության, որը պետք է նկատի առնեն համայնքի ներկայիս ու ապագայի մեր ազգային ու հասարակական գործիչները: Մեր ազգային ու կրթական կեանքը զարգացնելու նպատակով հարկաւոր է առնուազն 1500 նւիրեալ (200 հոգի՝ ազգային ենթակառուցների, դպրոցների ծնողական խորհուրդների, եկեղեցիների, միութենների, վարչութիւնների, տարբեր բաժանմունքների ու տարբեր մարմինների և այլ գործունէութիւն ծաւալելու համար):

Հասարակական աշխատանք կատարելու համար պէտք է մարդու մօտ ձևաւորած լինեն որոշակի համոզմունքներ: Նոր տնտեսամշակութային իրավիճակում նման համոզմունքներ դժուար են ձևաւորուել: Երիտասարդները դժուար են ընդգրկուել հասարակական աշխատանքներում, նազում են դրանցում ներգրաւելու դրդապատճառները, ընդհակառակը՝ աւելանում են հասարակական աշխատանքներում որևէ պատասխանատուութիւն յանձն չառնելու դրդապատճառները:

Համայնքում աշխատել ու աշխատում է մի կուսակցութիւն՝ ՀՀԴ-ը: Բազմակուսակցական համակարգի բացակայութիւնը նաև կարևոր գործօններից է, որը խանգարում է մարդկանց ընդգրկելու իրենց գաղափարախօսութեանը և մօտեցումներին հարազատ կուսակցութեան շարքերում կամ համակիրների օղակներում: Ժողովրդավարական մթնոլորտի բացակայութիւնը մէկ այլ խանգարող գործօն է, որը թոյլ չի տալիս մարդկանց հասարակական աշխատանքներում ընդգրկել: Ազգային իշխանութիւնը չունենալով լիիրաւ անկախութիւն, ստիպած է լինում իր հիմնական ուղղութիւններն ստանալ կուսակցութիւնից, կամ աւելի ճիշտ՝ կուսակցութիւնը թելադրում է իր մօտեցումները Ազգային իշխանութեանը, որը պատճառ է դառնում մի խումբ անկախ մարդկանց հեռացման ազգային իշխանութիւնից ու կեանքից:

Իմ կարծիքով կուսակցութիւնը պէտք է վերանայի իր քաղաքականութիւնը համայնքային հարցերում, պէտք է շատ չմիջամտի Ազգային իշխանութեան գործերին եւ թոյլ տայ, որպէսզի համայնքի պոտենցիալ ուժը համայնքը կառավարի: Օրինակ՝ հիմա 15-րդ Պատգամաւորական ժողովի ընտրութիւնների ժամանակահատուածն է եւ կյանքի է կոչել Կենտրոնական ընդհանուր յանձնախումբ, սակայն այս յանձնախումբը աւելի շուտ ձևական բնոյթ ունի: Կարևոր հարցերը որոշում են Դաշնակցութեան յանձնարարականն ստացած կուսակցականները: Թեմական խորհուրդը եւ Կենտրոնական յանձնախումբը, կամ թէկուզ ԹՀԹ առաջնորդ Սրբազան Հայրը իրաւունք չունեն որևէ հարցում ուղղակի պատասխանատուութիւն կրելու, նրանք բոլորը սպասում են կուսակցութեան կարգադրութիւններին: Նրանք իրենց դիրքը և աթոռը պահպանելու նպատակով երբեք չեն համարձակուի կուսակցութեան որոշումներին դէմ գնալ: Սա համայնքի լճացման ու տարածուած անտարբերութեան պատճառներից մէկն է:

Արդէն մօտենում է Թեհրանի Հայոց թեմի 15-րդ Պատգամաւորական ժողովի ընտրութիւնները: Ինչպէս անցեալում, այս անգամ ևս կողմերը դժուարանում են թեկնածուների ընտրութեան հարցում: Եղած պատգամաւորների մի մասն էլ անօգուտ է համարում պատգամաւոր լինելը և մտածում է այս շրջանում հրաժարել թեկնածու առաջադրելուց: 14-րդ նստաշրջանի Պատգամաւորական ժողովում կային պատգամաւորներ, ովքեր չորս տարւայ ընթացքում համայնքի տարբեր հարցերի վերաբերեալ որևէ կարծիք կամ տեսակէտ չեն արտայայտել, նրանք որևէ դրդապատճառ չունէին նիստերին մասնակցելու համար, այդ իսկ պատճառով երբեմն նիստերը քուրում չէին ունենում: Ի՞նչ նպատակ կարող է հետապնդել 80 տարեկան մարդուն պարտադրելը, որպէսզի պատգամաւոր դառնայ:

Վերոյիշեալ հարցերի շուրջ պէտք է կազմակերպուեն սեմինարներ ու կլոր սեղաններ, պէտք է գիտական վերլուծութեան ենթարկել ու ելքեր գտնել անտարբերութեան ու հասարակական պատասխանատուութիւն յանձն չառնելու միտումները նւագեցնելու ու վերացնելու ուղղութեամբ:



## ՀՀ ԱՐՏԳՈՐԾՆԱԽԱՐԱՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ.

# ԳՆԱՅՔԸ ԳՆԱՅԵԼ Է ԱՌԱՋ... ՆՐԱՆՔ ՊԻՏԻ ՎԱԶԵՆ, ՈՐ ՀԱՍՆԵՆ ԳՆԱՅՔԻՆ

Վ. Պողոսյան



«Այնպիսի տպավորություն է, որ այդ հայտարարություն անողը մնացել է 90-ական թվականների կեսերի իր ունեցած տեղեկություններով, եւ փորձում է ներկայացնել Ադրբեջանի դիրքորոշումը՝ ասելով, որ դա այն է, ինչ որ եղել է 1995 թվականին», այսպես է արձագանքել երեկ Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը՝ Լատվիայի ԱԳ նախարար Էդգարս Ռինկեյտիսի հետ համատեղ ասուլիսում արձագանքելով Ադրբեջանի ԱԳ նախարարի տեղակալի վերջին հայտարարության մասին հարցին:

Ադրբեջանի արտգործնախարարի տեղակալը հայտարարել էր, որ իր երկիրը առաջարկել է Ղարաբաղյան խնդրի կարգավորման ճանապարհային քարտեզ, որը, այսպես ասած, փուլային տարբերակն է եւ կրկնում է դեռեւս 90-ական թվականներին շրջանառության մեջ դրված տարբերակը: Պատրաստվո՞ւմ է արդյոք Հայաստանը ներկայացնել սեփական մշակած ճանապարհային քարտեզը:

«95 թվականից մինչ այսօր արդեն 15-17 տարի անցել է, գնացքը գնացել է առաջ, իսկ որոշ մարդիկ Ադրբեջանում մնացել են կայարանում: Կարծում եմ, նրանք պիտի վազեն, որ հասնեն գնացքին, որովհետեւ գնացքը շարժվում է առաջ», նշել է Նալբանդյանը: Նրա խոսքերով՝ «միջազգային հանրության կողմից կա ճանապարհային քարտեզ, որը առաջարկվել էր Կազանում, «խոսքը Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման հիմնարար սկզբունքների մասին է, որոնք առաջարկվել էին եռանախագահող երկրների կողմից»:

Նալբանդյանը հիշեցրել է, որ Դովիլում հենց Կազանի գազաթափողովից առաջ, Միացյալ Նահանգների, Ռուսաստանի եւ Ֆրանսիայի նախագահները կոչ էին արել կողմերին ընդունել այդ առաջարկները: «Չնայած գիտեք, որ Կազանում հնարավոր չէրավ հաջողություն արձանագրել, որովհետեւ Ադրբեջանը մերժեց այդ առաջարկները»:

Ադրբեջանի կողմից ինչ-որ նոր ճանապարհային քարտեզ առաջարկելու հարցը, ըստ Նալբանդյանի, լուրջ չէ, հատկապես եթե խոսքը 17 տարվա հնության առաջարկի մասին է: «Եթե 17 տարի առաջ այդ առա-

ջարկված քարտեզը ինչ-որ իմաստ ունենար, ապա այն ժամանակ հնարավոր կլիներ առաջ շարժվել դրա հիման վրա: Պետք է ավելի իրատես լինել, լրջորեն մոտենալ միջազգային հանրության առաջարկներին, որոնք արտահայտվում են եռանախագահների միջոցով»:

Նոյեմբերի 14-16-ը Հայաստան պաշտոնական այցով ժամանած լատվիացի նախարարն, իր հերթին, նշելով Նալբանդյանի հետ Իրանի եւ Սիրիայի շուրջն ընթացող զարգացումներին անդրադառնալու կարելությունն ու Հայաստանի փորձն այս երկրների հետ շփումներում, ասել է, որ համամիտ է հակամարտությունը խաղաղ ճանապարհով լուծելուն այլընտրանքի բացակայությանը՝ աջակցություն ցուցաբերելով միջազգային կառույցների՝ այդ հարցում ունեցած դիրքորոշմանը: Իսկ թե կարո՞ղ է Լատվիան ճանաչել Լեռնային Ղարաբաղի անկախությունը, Էդգարս Ռինկեյտիսին նշել է, թե ինքն անկախության ճանաչումը չի դիտարկում որպես հակամարտության կարգավորմանը նպաստող երեւույթ, հատկապես մինչեւ բանակցությունների ավարտը:

Լատվիացի դիվանագետը հիշեցրել է նաեւ, որ պաշտոնական Ռիգան քննադատել է մարդասպան Սաֆարովին հերոսացնելու Ադրբեջանի մոտեցումը, շեշտելով, որ այդ հարցում բալթյան բոլոր երկրները միաձայն են խոսում:

Աղբիւր՝ «Ազգ» օրաթերթ, 16 նոյեմբեր 2012

# ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԱՂԻՐԲԵԶԱՆՈՒՄ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ Է ԾՐԱԳՐՈՒՄ

ՌՈՒՍԱՍՏԱՆԱԲՆԱԿ ԱՂԻՐԲԵԶԱՆՑԻ ՄԵԾԱՋԱՐՈՒՄՆԵՐԸ ՄԻԱԿՈՐԿԵԼ ԵՆ ԵՒ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼ

*Յեղիսե Բունիաթյան*

Արդեն շուրջ երկու ամիս է՝ Բաքվում չեն դադարում քննարկումները Ադրբեջանում օլիգարխների օգնությամբ հեղաշրջում կազմակերպելու՝ Կրեմլի ծրագրերի շուրջ:

Ամեն ինչ սկսվեց այն բանից հետո, երբ Ռուսաստանում ապրող մի խումբ ադրբեջանցի միլիարդատերեր միավորվեցին եւ ստեղծեցին Ռուսաստանի ադրբեջանական կազմակերպությունների միություն, որը ղեկավարում է Ադրբեջանի նախկին առաջին փոխվարչապետ Աբաս Աբասովը: Ընդ որում, ադրբեջանցի միլիարդատերերի միավորումը համընկավ Վրաստանում անցկացված խորհրդարանական ընտրություններին, որտեղ միլիարդատեր Բիծինա Իվանիշվիլին հաղթեց գործող նախագահին, որոշ փորձագետների համոզմամբ՝ եթե ոչ Ռուսաստանի աջակցությամբ, ապա գոնե՝ լուռ համաձայնությամբ:

Պաշտոնական Բաքուն պատահական չհամարեց այս զուգահեյությունը, սփյուռքի հարցերով զբաղվող պետական կոմիտեն անգամ հրապարակավ հայտարարեց, թե նոր միավորումն անհմաստ է եւ աննպատակահարմար, քանի որ Ռուսաստանում տասը տարի է՝ արդեն կա Համառուսաստանյան ադրբեջանական կոնգրես, որը ստեղծվել է Հեյդար Ալիևի իշխանավարման օրոք եւ նրա անմիջական մասնակցությամբ:

Ավելին, Իլհամ Ալիևը Մոսկվա գործուղեց իր աշխատակազմի հասարակական-քաղաքական հարցերով զբաղվող վարչության պետ Ալի Հասանովին, ով, սակայն, հայրենիք վերադարձավ բավական մշայլ հայտարարություններով: «Յուրաքանչյուր ադրբեջանցի, ով կապված է այս պետության հետ, պետք է աշխատի բարելավել հարաբերությունները Բաքվի եւ այն երկրի միջեւ, որտեղ ինքը ապրում է, եւ ոչ թե դառնա գործիք այլոց ձեռքում՝ Ադրբեջանի անկախ քաղաքականության վրա ազդելու համար», - հայտարարեց Հասանովը՝ առանց կոնկրետ անուններ հրապարակելու:

Մինչդեռ իրենք՝ միավորման հետեւում կանգնած օլիգարխները, հերքում են Կրեմլի ձեռքում գործիք դառնալու մասին պնդումները, սակայն չեն էլ թաքցնում, որ վիրավորված են Ադրբեջանի ներկայիս իշխանություններից:

«Ռուսաստանում նախկինում կար Համառուսաստանյան ադրբեջանական կոնգրես, սակայն երկու տարի առաջ Բաքվից սկսեցին միջամտել այդ կառույցի աշխատանքներին, անգամ՝ փոխեցին կառուցվածքն ու վերացրեցին փոխնախագահների ինստիտուտը, ինչի արդյունքում, գործարարները վիրավորվեցին, քանի որ նրանց փաստացի քչեցին: Նրանք էլ ասացին եթե մեզ չեն հարգում, մենք այլեւս գումար չենք տա», - «Ազատություն» ռադիոկայանի ադրբեջանական ծառայության հետ զրույցում պատմել է նոր կազմակերպության հիմնադիրներից մեկը՝ գրող, դրամատուրգ, ռեժիսոր Ռուստամ Իբրահիմբեկովը: «Ահա, մենք էլ հավաքվեցինք եւ ստեղծեցինք նոր կազմակերպություն՝ Ռուսաստանում ապրող միլիոնավոր ադրբեջանցիների շահերը պաշտպանելու համար: Չեմ հասկանում, թե ինչու է այս հարցն այդքան մտահոգել իշխանություններին», - ասել է դրամատուրգը:

Անդրադառնալով այն հարցին, թե ինչու նոր կազմակերպության հիմնադրումը չի համաձայնեցվել Ալիևի վարչակազմի հետ, դրամատուրգը փաստել է՝ կառույցը հիմնել են Ռուսաստանի քաղաքացիները, որոնք ամենեւին պարտավոր չեն իրենց քայլերը համաձայնեցնել Ադրբեջանի ղեկավարության հետ: «Ռուսաստանում ապրող ադրբեջանցիների նախագահը Պուտինն է, եւ նրանց հնարավոր չէ կարգադրություններ անել Բաքվից», - «Ազատություն» ռադիոկայանի հետ զրույցում ասել է Ռուսաստանում ստեղծված նոր կազմակերպության համահիմնադիր Ռասիմ Իբրահիմբեկովը:

Աղբիւր՝ «Ազատութիւն» ռադիոկայանի կայք



ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-Ը  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ  
ՀՈՉԱԿՄԱՆ ՕՐՆ Է

# ՄԿՐԱՏԵԼ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ՀՆԱՐԱԴՒՐ ՉԷ

*Ռոբերթ Սաֆարյան*



Շուտով նոյեմբերի 29-ն է՝ Հայաստանի Սոցիալիստական Հանրապետության հռչակման օրը: Հայաստանը Սովետական հռչակեց 1921 թվականին եւ սովետական էր մինչեւ 1991 թվականը, այսինքն 60 տարի: Թէ ինչպէս սովետական դարձաւ Հայաստանը այս գրութեան նիւթը չէ: Դա, ոչ մի խօսք, հայոց պատմութիւնն ուսումնասիրողի համար կարելի է հարց է: Յամենայն դէպս, դարձաւ: Այս գրութեամբ ուզում եմ առաջ քաշել մի այլ հարց, այն, որ մենք սփիւռքում ինչքան քիչ գիտենք այս Սովետական Հայաստանի մասին եւ դա ինչպէս է դժուարացնում սփիւռքահայի եւ Հայաստանի բնիկ հայի փոխյարաբերութիւնը: Նա, ով ինքը, կամ իր ծնողները ապրել են ստալինեան բռնութեան շրջանում եւ մենք, որ դա մեր անցեալի մասը չի կազմում, դժուար կարող ենք իրար հասկանալ: Նա, ով երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ կորցրել է հորը կամ զաւակին, բոլորովին տարբեր ծելով է ըմբռնում Սովետական Հայաստանը, քան մենք, սփիւռքում ծնւած ու մեծացած հայերս: Դա մասամբ բնական է, բայց մասամբ էլ արդիւնքն է այն գաղափարական քարոզչութեան, որը տարիներ տարւել է մեր մէջ, եւ որի նպատակն է եղել շեշտելով Հայաստանի երկրորդ հանրապետութեան բացասական կողմերը, բոլորովին սխալ պատկերացում ունենալ նրա մասին: Որո՞նք են Սովետական Հայաստանի 60-ամեայ

պատմութեան կարեւոր զարգացումները:

## **Ստալինեան բռնութիւններ**

Հայաստանի հանրապետութիւնն էլ, ինչպէս Խորհրդրդային Միութեան միւս հանրապետութիւնները ապրեց ստալինեան բռնապետական իշխանութիւնը: Նոյն ոստիկանական հետախուզութիւնները, գիւղատընտեսութեան բռնի կոլեկտիւացումը, մտաւորականութեան աքսորը եւ բոլոր տեսակի քաղաքական ընդդիմութեան արիւնտ ճնշումը: Հայ գրողներից Եղիշէ Չարենցը, Ակսել Բակունցը եւ շատ ուրիշներ զոհեցին իրենց ստեղծագործական կեանքի հասունութեան պահին, իսկ Գուրգէն Մահարին եւ մեծ թւով ուրիշներ ճաշակեցին Սիբիրում աքսորի համը:

## **Երեւանը Երեւան դարձաւ սովետական շրջանում**

Այսօրայ մեզ ծանօթ Երեւանը ձեւաւորւեց եւ կառուցւել սովետական շրջանում: Խօսում ենք Հայաստանի մայրաքաղաքի 2750-ամեայ անցեալի մասին, բայց այսքանը պարզ է, որ քսաներորդ դարի սկզբին Երեւանը մի փոքր յետամնաց քաղաք էր, անհամեմատելի, ասենք թէ Թիֆլիսի հետ (պատահական չէ, որ հայ գրողները եւ մտաւորականները համարեայ բոլորը սովորում էին Թիֆլիսում): Մեզ ծանօթ Օպերայի շէնքը, Հանրապետութեան հրապարակը, յաղթանակի



այգին, աւելի ուշ Կասկադն ու մետրոն կառուցել են սովետական շրջանում:

### **Երկրորդ աշխարհամարտը**

1941 թականին նացի Գերմանիան յարձակեց Խորհրդային Միութեան վրայ եւ այդպիսով Սովետական Միութիւնը ներքաշեց Երկրորդ համաշխարհային պատերազմի մէջ: Հայերը մեծ դեր ունեցան սովետական դիմադրութեան մէջ: Պատերազմին մասնակցեցին 600000 հայ, որոնցից զոհեցին 35000-ը: Սա յատկապէս համեմատած Հայաստանի երեք միլիոնից պակաս բնակչութեան հետ, ահռելի մեծ քանակ է: Այսօր Հայաստանում նշում են Երկրորդ աշխարհամարտում զոհած զինուորների օրը եւ դեռեւս այդ պատերազմը անւանում է Հայրենական պատերազմ: Կան մեծ թուով մարդիկ, որոնց ընտանիքը կորցրել է մէկ կամ աւելի անդամներ: Մենք սփիւռքում ընդհանրապէս չենք հասկանում այդ մեծ իրադարձու-

թեան նշանակութիւնը եւ գուցէ անգիտակցաբար դա համարում ենք միայն Ստալինեան խարդախութիւններին զոհ գնացած մի խումբ հայերի ճակատագիր: Սակայն այլ է Հայաստանում ծնւած ու մեծացած հայի գգացումը: (կարդայ համապատասխան յօդւածը էջ 13-ում):

### **Ներգաղթ**

Պատերազմից յետոյ Խորհրդային Միութիւնը Հայաստանի համար կիրառեց սփիւռքահայութեան հայրենադարձութիւնը խրախուսելու քաղաքականութիւն: Դա մեծ ներգաղթն էր, որ թէեւ կիսատ մնաց, սակայն դրա շրջանակներում Հայաստան վերադարձաւ 150000 հայեր աշխարհի զանազան երկրներից, հիմնականում արեւմտահայեր, մեծ եղեռնի վերապրողներ եւ նրանց զաւակները, ովքեր այսպէրը արտասանում էին «աղպար» ու այդպէս մինչեւ օրս էլ մնացին «աղպար»: Որքան ահռելի թիւ է 350000 զոհերի թիւը,

նոյնքան մեծ է 150000 գաղթականների թիւը: Այդ քանակութեամբ գաղթական, բնականաբար, ունէր իր սոցիալական հետեւանքները, որ դեռ շարունակուում են, եւ որոնք հնարաւոր չէ յաղթահարել միայն քաղաքավարի բարիացակամութեան կոչերով եւ որոնք կարօտ են լուրջ ուսումնասիրութեան:

**Տնտեսութիւն, ժողովրդի բարեկեցութեան մակարդակի աճ**

Հայաստանը դարձաւ Խորհրդային Միութեան շրջանակում արդիւնաբերական երկիր: Հիմնւեցին գործարաններ, որոնց արտադրութիւնը արտահանուում էր Խորհրդային այլ հանրապետութիւններ: Սյս արդիւնաբերական հաստատութիւններից են Նայիրիտ համալիրը եւ այլն: Երկրում զարգացաւ էլեկտրական

հոսանքի ցանցը: Գործարկւեց ատոմակայանը: Մի առ ժամանակ Հայաստանում զգալի դարձաւ բնակարանի պակասը եւ նոր ամունացած զոյգերը հարկադրաբար, առնւազն մի առ ժամանակ ապրում էին իրենց ծնողների հետ փոքր բնակարաններում: Բրեժնեւեան շրջանում, ժողովրդի բարեկեցութեան մակարդակը բարձրացաւ, եւ այսօր Հայաստանում աղքատութեան մատնւած միջախասակ ու տարեց մարդիկ ափոսանքով են խոսում այդ շրջանի մասին, երբ կեանքն աւելի հանգիստ էր, չկար տնտեսական անապահովութեան զգացում եւ մարդիկ իրենց աշխատանքի ժամերը աւարտելուց յետոյ իրապէս առիթն ունէին հանգստանալու եւ զւարճանալու: Հայ ժողովուրդը իր վերջին դարերի պատմութեան մէջ, երբէք այդ մի քանի տասնամեկների չափ հանգիստ նորմալ

# ՀԱՅ ԿՈՄՎՈՒՄԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԸ



**Ստեփան Շահումեան:** Հայ բոլշեւիկների ղեկավարը, որը գնդակահարւեց Բաբելի կոմունի դէպքերում 1918 թականին:



Հայաստանի Կոմունիստական կուսակցութեան առաջին ղեկավարներից՝ Ալեքսանդր Միասնիկեանի յուշարձանը այսօրայ Երեւանում: Հայաստանի Հանրապետութեան պետութիւնը մեծարում է կոմկուսի ղեկավարին:



**Աղասի Խանջեան:** Հայ կոմունիստական կուսակցութեան ղեկավարը Ստալինի օրօք, որը սպանւեց Չեկայի պետ՝ Բերիային ձեռքով:



**Կարէն Դեմիրճեան:** Հայաստանի Կոմկուսի նախագահը սովետական շրջանի վերջին տարիներին: Նա շարունակեց իր քաղաքական գործունէութիւնը Հայաստանի անկախութիւնից յետոյ: Չոհեց 1999 թականի հոկտեմբերի 27-ին, Ազգային ժողովի զինեալ գրաւման դէպքում:



կեանք չէր վայելել, թէեւ գիտենք Բրեժնեւեան շրջանը քաղաքական ազատութիւնների առումով յետադարձ էր համեմատած Խրուշչեւի ժամանակաշրջանի: Սակայն հարցն այս է, որ սովորական ժողովուրդը բարձր է գնահատում տնտեսական ապահովութիւնը եւ իր բարեկեցութեան մակարդակի աճը:

### Կանայք

Խորհրդային միութիւնում հակասական զարգացում ապրեցին կանայք: Մի կողմից նրանք մուտք գործեցին հասարակական կեանք՝ ձեռք բերեցին բարձր մակարդակի կրթութիւն եւ տնտեսական հիմնարկներում աշխատելու հնարաւորութիւն, սակայն միւս կողմից չթեթեւացաւ նրանց աւանդական պարտականութիւնները որպէս տնտեսուհի եւ մայր: Կինը ներկայ էր հասարակական տարբեր բնագաւառներում, որը բնականաբար հիմնական փոփոխութիւն էր նրա աւանդական կարգավիճակում, սակայն նորերի կողքին շարունակելով իր ուսերի վրայ տանել երկու նախկին պարտականութիւնները: Այս դրութիւնը ունէր իր մշակութային կողմը: Երբ Հայաստանը անկախացաւ եւ սփիւռքահայութեան շփումները հայրենիքի հետ շատացան, զարմանալի էր թւում հայաստանցի տղամարդու աւանդական մտածելակերպը կանանց մասին որպէս սեղան պատրաստող, շոր լւացող եւ երեխաներ խնամող: Կանանց մեքենայ վարելը համարում էր արտասովոր մի երեւոյթ, այն էլ մի երկրում, որի պաշտօնական քարոզչութեան մէջ անընդհատ նրանց ցուցադրում էին որպէս գործարանի աշխատուոր կամ գիտական հաստատութիւնների հետազօտող, բժշկուհի եւ համալսարանի դասախօս: Այսպիսի հակասական մտածելակերպի ժառանգորդն է այսօրայն հայաստանցի կինը, որը փորձում է մի կերպ յաղթահարել:

### Մշակոյթ եւ լեզու

Սովետական տարիներին անգրագիտութիւնը Հայաստանում համարեայ անհետացաւ: Գրքերը տպագրւում էին տասնեակ հազար տպաքանակով եւ ընթերցանութիւնը համատարած սովորութիւն էր քաղաքացու համար: Մի քիչ աւելի բարեկեցիկ ընտանիքում կար դաշնամուր եւ երեխաները դպրոցում եւ տնում զբաղւում էին երաժշտութեամբ: Ի հարկէ, կտրւած լինելով արւեստի եւ մշակոյթի բնագաւառներում աշխարհի միւս երկրների զարգացումներից, մշակութային ճաշակը ընդհանրապէս հին էր, սակայն ընդհանուր առմամբ, զարգացաւ մշակութային գիտակցութեան հիմքերը:

Շատ է խօսուում սովետական շրջանում հայ մշակոյթի ռուսականացման քաղաքականութեան մասին: Ղա իրականութիւն է, սակայն դրա մակարդակը գանազան շրջաններում տարբեր է եղել եւ ընդհա-

նուր առմամբ գնալով նւագել է: Ղրանով հանդերձ, սովետական շրջանում հայերէն լեզուն զարգացաւ: Վարչական, դատական եւ գիտական ոլորտներում գործածուեց հայերէնը: Նախահամալսարանական շրջանի դասագրքերը հայերէնով էին եւ ներքին կեանքի եւ լրատամիջոցների մէջ գործ էր անուում հայերէնը: Ռուսերէնի գործածութիւնը բարձրագոյն կրթութեան ոլորտում եւ ռուսերէն բառերի մուտքը առօրեայ խօսակցութեան մէջ չափտի միայն պարտադրւած ռուսականացման արդիւնքը համարել. դա նաեւ Ռուսաստանի եւ ռուսական մշակոյթի հետ սերտ յարաբերութիւնների արդիւնքն էր եւ նմանում է, ասենք թէ այսօր շատ երկրներում անգլերէն բառերի գործածութեան հետ: Խօսքը այստեղ դրա դրական կամ բացասական գնահատման մասին չէ, այլ այն մասին, որ դա միայն դաւադրութեան կամ բռնի պարտադրման արդիւնքը չէր եւ մենք պարտաւոր ենք հայ-ռուսական մշակութային յարաբերութիւնների ֆակտը, նաեւ որպէս բնական երեւոյթ ընդունել:

Միայն նկատի առնելով հայերէն հանրագիտարանի հրատարակման իրականութիւնը, դժւար կարելի է թերագնահատել ազգային լեզուի եւ մշակոյթի զարգացումը սովետական շրջանում:

### Ազգային արթնացում



Ինչպէս արդէն յայտնի է, 1965 թականի ապրիլի 24-ին Երեւանում տեղի ունեցաւ մեծ ժողովրդական ցոյց, որի ընթացքում ցուցարարները պահանջում էին Խորհրդային Միութիւնից, որպէսզի ճանաչի հայոց մեծ եղեռնը: Նրանց լոզունգներում խօսք էր գնում հայկական հարցի արդար լուծման եւ հայկական հողերի վերադարձման մասին: Այս ցոյցից յետոյ վաւերացուեց հայոց մեծ եղեռնի յուշարձանը կառուցելու նախագիծը եւ երկու տարի յետոյ բացոււմը կատարուեց Ծիծեռնակաբերդի: Մինչեւ օրս լուրջ չի ուսումնասիրել այս շարժման աղբիւրները: Հայ աւանդական կուսակցութիւնները ուղղակիօրան, այսինքն որպէս կազմակերպիչներ, դեր չեն ունեցել այս մեծ հանրահաւաքի կայացման գործում, սակայն նրանց քա-

# ՀԱՅԱՍՏԱՆԸ «ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ԱՄՍԱԳՐԻ ԷՋԵՐՈՒՄ

Արդիւնաբերութեան զարգացում, երջանիկ բանուորներ, մշակոյթի ծաղկում. այսպէս էր ներկայացում Սովետական Հայաստանը սփիւռքի համար հրատարակող նոյնանուն ամսագրի էջերում:



րոզական աշխատանքը սփիւռքում երեւի իր ազդեցութիւնն է ունեցել: Հաւանաբար աւելի կարելի էր Սովետական Միութեան ղեկավարութեան մակարդակում ազգային հարցի ճանաչումը եւ սովետական հանրապետութիւնների ղեկավարների մօտ ազգային մտածելակերպի զարգացումն է եղել: Այսինքն ինչ որ բան փոխել է վերելում, որը դիւրացրել է նման մեծ հանրահաւաքի իրականացումը: Արդէն 1954-ին Անաստաս Միկոյեանը քարոզում էր ազգային մշակոյթը տարածելու մասին:

Սրանք, գիտեմ, մեծամասնաբար հարցեր են քան պատասխաններ: Այս գրութեան նպատակն էլ վերջնական պատասխաններ տալը չէ: Նպատակն այն է, որ շեշտել մի պարզ իրականութիւն՝ այն, որ Սովետական Հայաստանը մեր ժամանակակից պատմութեան կարեւորագոյն շրջանն է: Հնարաւոր չէ այն մկրատել պատմութիւնից, այն ինչ պատահել է այդ տարիներին համարել ռուս եւ հայ կոմունիստների դաւադրութիւն: Այդպիսի մտածելակերպ, դժբախտաբար տիրում էր սփիւռքեան մշակութային կեանքում եւ այսօր էլ մասամբ շարունակում է: Ի հարկէ, եղել է նաեւ հակառակը՝ «Հայաստանականներ»-ի քարոզչութիւնը, որի համաձայն, Հայաստանը աշխարհի դրախտն էր: Երբ անկախացաւ Հայաստանը, նրանք տեսան, որ այդպիսի դրախտ միայն իրենց երեւակայութեան մէջ է գոյութիւն ունեցել: Միւսները, հակահայաստանականները, շարունակեցին կառչել մի ուրիշ տեսակի երեւակայութեան: Նրանք մտածում էին, որ Հայաստանում վաթսուն տարի դադարել է պատմութիւնը եւ երկիրը միայն սպասում է, որ իրենք վերադառնան եւ ամէն բան շարունակեն այնտեղից, որ իրենք պարտադրաբար այն յանձնել էին բոլշեւիկներին: Մի քիչ ուշ պարզւեց, որ սա էլ երեւակայութիւն է եւ երկրում կան այս վաթսուն տարիների ընթացքում ձեւաւորւած եւ զարգացած քաղաքական ուժեր, որոնք աւելի ծանօթ են երկրի պայմաններին եւ աւելի ունակ ղեկավարելու երկրի քաղաքական կեանքը: Սովետական Հայաստանի պատմութիւնը կարօտ է գիտական, այսպէս ասած, ոչ գաղափարախօսական ուսումնասիրութեան:

## ՀԱՅԵՐԸ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ

*Վահէ Անթանեսեան*

Լրացաւ Հայրենական մեծ պատերազմում Խորհրդային ժողովրդի տարած յաղթանակի 66-ամեակը: Հայ ժողովուրդը Խորհրդային Միութեան միւս ժողովուրդների հետ մէկտեղ պատերազմի առաջին իսկ օրուանից նետուեց օրհասական պայքարի: Հայ ժողովրդի մասնակցութիւնը Երկրորդ աշխարհամարտին մեր պատմութեան ամենափայլուն էջերից է:

1939 թ. սեպտեմբերի 2-ին Գերմանիան յարձակւեց Լեհաստանի վրայ և սկսեց Երկրորդ համաշխարհային պատերազմը: Իսկ 1941 թ. յունիսի 22-ին, առանց պատերազմ յայտարարելու, յարձակւեց նաև Խորհրդային Միութեան վրայ, և պատերազմն աւելի մեծ ծաւալներ ստացաւ:

Խորհրդային Միութեան, ինչպէս նաև եւրոպական երկրներում բնակւող հայ ժողովուրդը ակտիւ մասնակցութիւն ունեցաւ պատերազմին: Շուրջ 650000 հայեր մասնակցեցին պատերազմին, և նրանցից մօտ 350000-ը զոհուեցին:

Հարկ է նշել, որ պատմութեան մէջ երբևէ հայ ժողովուրդը միաժամանակ ռազմի դաշտ չի հանել այդքան զինուորներ և որևէ պատերազմի ժամանակ այդքան մարդկային կորուստներ չի տուել:

Հայ ժողովրդի համար Հայրենական պատերազմն իսկական գոյամարտ էր:

Պատերազմին Խորհրդային Միութիւնը պատրաստ

չէր: Գերմանիան արագ յարձակւումով անակնկալի բերեց Խորհրդային զինուած ուժերին ու յայտնեց Մոսկւայի մատոյցներում: Գերմանական զօրքերի «Հարաւ» խմբաւորումը յարձակւեց Կովկասի ուղղութեամբ և լուրջ սպառնալիք ստեղծեց ԽՍՀՄ-ի համար: Կովկասի անկումով ոչ միայն ԽՍՀՄ-ը կը կորցնէր վերահսկողութիւնը Բաքւի նաւթահանքերի նկատմամբ, որ այդ տարիներին լուրջ հարուած կը լինէր ԽՍՀՄ-ի բանակի սպառազինութիւններին, այլև գերմանացիները հնարաւորութիւն կստանային թափանցելու Միջին Ասիա և թիկունքից շրջանցելու մարտնչող Խորհրդային զօրքերին:

Այսպիսով, Կովկասի ճակատամարտը ռազմավարական առումով ամենակարևոր իրադարձութիւնն էր պատերազմի առաջին փուլում: Կովկասի ճակատամարտն առանձնայատուկ նշանակութիւն ունէր հայութեան համար: Ստալինգրադի գրաւումից յետոյ Հայաստանի սահմանների մօտ կենտրոնացած թուրքական սպառազէն 26 դիւիզիաներ պատրաստ էին յարձակւելու ԽՍՀՄ-ի վրայ և մտնելու Հայաստան: Այս անգամ արևելահայութիւնը չէր փրկւի վերահաս եղեռնից...

Հետևաբար, Հայրենական պատերազմում մարտնչող հայորդիները կռոււմ էին հէնց Հայաստանի, հայ ժողովրդի փրկութեան համար:





1942 թ. ամռանը գերմանացիները գրաւեցին Ղրիմը, Կերչը, հասան Ստալինգրադ: 1943 թ. հոկտեմբերին գերմանական բանակը Ստալինգրադի մատոյցներում անձնատուր եղաւ:

Պատերազմի տարիներին Կրեմլի ղեկավարութիւնը թոյլատրեց ազգային զօրամասեր կազմաւորել: Հայաստանում կազմաւորեց վեց դիւիզիա:

76-րդ հայկական հրաձգային դիւիզիան կազմաւորել է դեռևս 1922 թ.: Այն հսկում էր հայ-թուրքական սահմանը: Պատերազմի սկզբից դիւիզիան նետուեց մարտերի և աչքի ընկաւ Ստալինգրադի ճակատամարտում: 1943 թ. այն վերակազմաւորեց որպէս 51-րդ գարդիական դիւիզիա: Ստալինգրադից յետոյ դիւիզիան մասնակցեց Ուկրայինայի, Մերձբալթիկայի ազատագրման համար մղւած մարտերին:

1941 թ. դեկտեմբերին Երևանում գնդապետ Սիմոն Զաքեանի հրամանատարութեամբ ձևաւորեց 89-րդ հայկական հրաձգային դիւիզիան: 1942 թ. օգոստոսից այն արդէն գործող ռազմաճակատում էր: Ռազմաճակատ մեկնելու պահին իր շարքերում ունէր շուրջ 12000 զինուոր և սպայ, չնչին բացառութեամբ՝ բոլորը հայեր: Դիւիզիան իր մարտական ուղին սկսեց Գրոզնու մատոյցներում և ծանր մարտերով անցնելով շուրջ 3700 կիլոմետր՝ իր փառաւոր ուղին աւարտեց Բեռլինում: Դիւիզիան մասնակցեց Թերեք, Մալգոբեկ, Մինուդի, Ստաւրոպոլ, Տիխորեցկ քաղաքների ազատագրման մարտերին: Յատկապէս աչքի ընկաւ Թաման թերակղզու համար մղուող մարտերում, որի ժամանակ արիւնահեղ մարտերի արդիւնքում ձեռքեց պաշտպանական եօթ շերտից բաղկացած թշնամու «Կապոյտ գիծ» շղթան: Դրա համար էլ գերագոյն գլխաւոր հրամանատարութեան հրամանով 89-րդ հայկական հրաձգային դիւիզիան կոչուեց Թամանեան: Այդ ժամանակամիջոցում դիւիզիայի հրամանատարն արդէն ԽՍՀՄ հերոս, գեներալ-մայոր Նւէր Սաֆարեանն էր:

1942 թ. յունւարին Հայաստանում գտնյող 409-րդ հրաձգային դիւիզիան վերակազմաւորեց, և նրա շարքերը համալրուեցին հայազգի մարտիկներով:

Ռազմաճակատ մեկնելու պահին դիւիզիայի շարքերում հաշուում էին 14000 ռազմիկ, որոնց շուրջ 98%-ը հայեր էին: 409-րդ դիւիզիան իր մարտական ուղին սկսեց Մոզդոկ քաղաքից և յաղթական երթով հասաւ Զեխիա ու Աւստրիա:

1942 թ. Հայաստանում կազմաւորում է 408-րդ հայկական հրաձգային դիւիզիան: Այն արդէն սեպտեմբերից մարտերի մէջ մտաւ Նովոռոսիյսկի շրջանում: Դիւիզիան համալրուած էր շուրջ 12000 մարտիկներով:

Հայկական զօրամիւտումներից առաջինը ռազմաճակատ մեկնեց 390-րդ դիւիզիան և 1942 թ. գարնանը Նովոռոսիյսկի ծովային դեսանտով ափ իջեցւեց Ղրիմի Կերչ թերակղզում ու մինչև 1942 թ. մայիսը մասնակցեց Կերչի պաշտպանութեանը: Դիւիզիան գրեթէ ամբողջութեամբ ջախջախուեց, զոհուեց նրա հրամանատար գնդապետ Սիմոն Զաքեանը:

1942 թ. Հայաստանում ձևաւորեց նաև 261-րդ հայկական հրաձգային դիւիզիան, որ ռազմաճակատ չմեկնեց և պաշտպանում էր հայ-թուրքական սահմանը:


Բացի նշուածներից, Հայաստանում կազմաւորուեցին և համալրուեցին 61-րդ, 151-րդ, 236-րդ և 320-րդ հրաձգային դիւիզիաները: Չնայած դրանք պաշտօնապէս չէին համարում հայկական, բայց դրանց կազմում ընդհանուր առմամբ շուրջ 30000 հայ մեկնեց ռազմաճակատ:

Եւս 30000 հայ ծառայում էր սևծովեան նաւատորմում: Խորհրդային Միութեան հերոսի կոչման արժանացաւ հայ ժողովրդի 106 զաւակ: Եւս 10 հայաստանցի արժանացաւ ԽՍՀՄ հերոսի կոչման: ԽՍՀՄ մարշալ Յովհաննէս Բաղդամեանն ու օդաչու Նելսոն Ստեփանեանն այդ կոչմանն արժանացան կրկնակի: Նելսոն Ստեփանեանի հաշուում կայ 1700 մարտական թռիչք, թշնամու խորտակուած 13 նաւ և հազարաւոր սպանուած թշնամիներ...

64 զինուորական արժանացաւ գեներալի կոչման: Հայերը ԽՍՀՄ ժողովուրդների շարքում չորրորդն էին ռազմածովային նաւատորմի գեներալների, ռազմաօդային ուժերի, հրետանային զօրքերի սպաների կազմում և վեցերորդ տեղում էին ԽՍՀՄ հերոսների ցանկում: Իսկ եթէ հայ ժողովրդի զոհերի և հերոսների թիւը համեմատենք այդ տարիների ՀԽՍՀ բնակչութեան թիւ հետ, հայերն առաջատարն էին...

Հայ մէկ զօրահրամանատար զբաղեցնում էր ռազմաճակատի հրամանատարի պաշտօնը (Յովհաննէս Բաղդամեան), 3-ը՝ բանակի, 6-ը՝ կորպուսի, 28-ը՝ դիւիզիայի, 100-ը՝ բրիգադի ու գնդի հրամանատարներ էին: 80000 հայ պարզատուրեց մեդալներով ու շքանշաններով...

Աղբիւր՝ [www.ankakh.com](http://www.ankakh.com)



Վերջին ուղեւորութեանս ընթացքում Երեւանում հանդիպեցի ընկերոջս: Մեր խօսակցութեան պահին նա նշեց մի յօդաձի մասին, որը տպագրել է «Ուխտ Արարատի» ամսագրի 2006 թականի համար 4-ում: Նրանից խնդրեցի հնարաւորութեան դեպքում ինձ ուղարկի այդ յօդաձի պատճէկը: Յօդաձն ընթերցելով, այն շատ հեռու գտայ իրականութիւնից եւ ինձ թաց, որ դրա հեղինակը անշուշտ պիտի լինի անտեղեակ մի անձնաւորութիւն, որը տարւել է Միջին Արեւելքի շրջանի երկրների համար կայսերապաշտ երկրների մշակած երեւակայական ծրագրերով: Սակայն, ինձ հետաքրքրողը Հայաստանին առնչող հատւածն էր: Նախ թոյլ տւէք մեջբերեմ յօդաձն ամբողջութեամբ:

*լեւոն Ահարոնեան*

## ՄԵՐՁԱԴՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ‘ԴԵՄՈՎՐԱՏԱՑՄԱՆ’ ՆԱԽԱԳԻԾԸ

Մերձաւոր Արեւելքի նկատմամբ Ամերիկայի Միացեալ Նահանգների /ԱՄՆ/ կողմից ծրագրաւորւած եւ հետետողականօրէն իրականացող, այսպէս կոչւած «Աշխարհի գլոբալացման ընդհանուր ծրագրի պատկեր», որը ըստ էութեան, միջանկեալ, անցումային այն իրողութիւնն է, որի ստեղծման հիմքի

վրայ, յաջորդ փուլում պէտք է /ամերիկանացման «դեմոկրատիայի»/ սկզբունքով ձեւաւորւի «Մերձաւոր Արեւելքի Միացեալ Նահանգներ» անւանումն ունեցող ընդհանուր պետութիւն: Այն իր մէջ պէտք է ներառի՝

- 1-Հայաստանի Հանրապետութիւնը /առանց Արցախի եւ Մեղրու շրջանի/
- 2-Թուրքիան /երկփուլ մասնատումով/
- 3-Սիրիան/մասնատումով/
- 4-Լիբանանը /ընդարձակումով/
- 5-Յորդանանը /ընդարձակումով/
- 6-Սաուդիան Արաբիան /մասնատումով/
- 7-Իրաքը /մասնատումով/
- 8-Իրանը /մասնատումով/
- 9-Աֆղանստանը /մասնատումով/
- 10-Պակիստանը /մասնատումով/
- 11-Ադրբեջանը, որը սպառել է 1918 թ.-ից իր վրայ դրած առաքելութիւնը, միանալու է Իրանի հիւսիսային շրջանի Ադրբեջանին /Ատրպատական/, որի անունով էլ այն ժամանակ կնքել էին ներկայիս Ադրբեջանին: Այս ընդհանուր մասնատումների արդիւնքում ստեղծելու են նոր պետութիւններ.

1-Քուրդիստան.  
ԱՄՆ-ը ԱՆզլիան եւ Իսրայէլը, Իրաքի տարբերակով, Իրանին պատերազմի մէջ ներքաշելով, մեծ ծաւալների հասցնելով շիաների եւ սիւնիների միջեւ /իրենց կողմից հրահրւած եւ միջնորդւած/ թափ առնող քաղաքացիական պատերազմը, ինչպէս եւ ռազմաքաղաքական ընդհանուր այդ խառնաշփոթի մէջ ներքաշելով Սիրիային, Թուրքիային ու Քրդական շարժումը, փորձելու են ստեղծել Քուրդիստանի նոր

պետութիւն:

2-Իրաք.

Բաժանւելու է երեք առանձին «Սիւնի Իրաք» եւ «Արաբական Շիա Նահանգ» կոչուող երկրների / հիւսիսային քրդական մասը միանալու է նոր Քուրդիստանին/:

3-Սաուդիան Արաբիա

Լուրջ ձեւափոխումների է ենթարկւելու:

Նախատեսւում է անջատել՝ հիւսիս-արեւմտեան հատածները, դրանք միացնելով Յորդանանին:

Արեւելեան Մեքքա քաղաքը ներառող մասը, ուր ստեղծելու է «Իսլամական Սուրբ Նահանգ» կոչուող նոր պետութիւնը: Արեւելեան Քուվէյթի եւ Կատարի միջեւ ընկած տարածքն էլ միանալու է «Արաբական Շիա Նահանգ» նորաստեղծ պետութեանը: Հարաւային հատածը կտրւելու եւ միացւելու է

պայմանագրով, Բուշեիկեան Ռուսաստանը 25 տարով տրւել էր Թուրքիային: Ի դէպ, 1991 թ. Մարտի 12-ին, Գորբաչովն այդ պայմանագիրը կրկին երկարացրել էր եւս քսան տարով, որը պէտք է վերանայի 2011 թ.:

Արեւելեան Հայաստանի այս հատածի միացումը Հայաստանի Հանրապետութեան, պատմական արդարութիւնը վերականգնելու միտում չի հետապնդում, այն ատելի շուտ ունի այլ նպատակ:

Ա-Պայմանաւորող երկրներից մէկի կողմից պայմանագիրն այլեւս անվաւեր ճանաչելու միջոցով Ռուսաստանին գրկել հարաւային Կովկասի երեք երկրների (առաջնահերթօրէն Հայաստանի) նկատմամբ ունեցած պայմանագրային պարտաւորութիւններից:

Բ-1990-ից Հայաստանի անկախութեան հռչակումից



Եմենին, ընդարձակելով Եմենի Կարմիր ծովով ունեցած սահմանը:

Այս բոլոր ձեւաւորումները պայմանաւորւած են ԱՄՆ-ի, Անգլիայի կողմից Կարմիր ծովի եւ Պարսից Ծոցի նկատմամբ կատարեալ բազմաշերտ եւ բազմալժակ հսկողութիւն սահմանելու խնդրով:

Ըստ նոյն ծրագրի, քաղաքացիական պատերազմի լուրջ փորձութիւն է սպասուում Պակիստանին: Այն բաժանւելու է 3 մասի: Ամբողջ հիւսիսը եւ արեւմտեան մասի կէսը միացւելու է Աֆղանստանին: Իսկ հարաւարեւմտեան մասը եւ Իրանից անջատող հարաւարեւելեան հատածների ընդհանուր տարածքում կստեղծւի «Բելուջիստան» պետութիւնը:

Ըստ ձեւափոխութեան Հայաստանին է միանալու 1918-20 թթ. ՀՀ մաս կազմող Արդահան-Կարս-Իգդիր հատածը՝ ներառեալ Արարատ լեռը:

1921 թ. Մարտի 16-ին ռուս-թուրքական

յետոյ, ՀՀ-ի համար ուժը կորցրած Կարսի պայմանագիրն անկախ է դարձրել Թուրքիայի պետական սահմանների հարցը:

Ինչպէս վկայում են 15 տարիների դէպքերի զարգացումները, Հայաստանը, որպէս պետութիւն վերացնելու, Անգլո-Ամերիկեան ծրագրերը չեն փոխւել: Փոխւել է ձեռագիրը. 15 տարի յաղթանակօրէն կանգուն Արցախը, մեզ, համայն հայութեանը, պարտադրւած ազգային ազատագրական պատերազմով, իսկ ազատագրւած Լեռնային Ղարաբաղի հանրապետութիւնը, կարծես թէ ոչ իրողութիւն է եւ արեւմտեան արժէքների ամենաթունդ հաւատացեալներն անգամ պէտք է տեսնեն, որ անտեսելով ակնառու փաստերը, 14 տարի շարունակ «խաղաղ կարգաւորման» տարւող Արցախի խնդիրը դարձել է «անլուծելի»:

2001 թ.-ից առայսօր ՀՀ-ի, հիմա նաեւ ԼՂՀ-ին կատմամբ



իրագործում է Սահմանադրական- օրենսդրական դիւերսիւն ներխուժում: Ծրագրում են հայկական մեր երկու երկրների իշխանաւորների ձեռքբերով իրագործել ՀՀ-ի եւ ԼՂՀ-ի «ինքնաւուծարման» գործընթացը:

Այս բոլորը համահունչ է ԱՄՆ-Անգլիա-Իսրայէլ եռեակի, այսպէս կոչւած, «Մեծ Մերձաւոր Արեւելք» ծրագրերի ստեղծմանը:

Ինչպէս յայտնի է աշխարհի գլոբալացման «Աշխարհի Միացեալ Սահանգներ» 1890-1908 թթ. Նախագծուած մասսոնական ծրագիրը, կառուցուած էր եւ է Ամերիկայի Միացեալ Սահանգների, Անգլիայի եւ Իսրայէլի աշխարհին տիրելու հիւանդագին եւ յանցագործ գործողութիւնների իրականացնելու հաշիւն:

Այդ մարդատեսաց եւ ամբողջ աշխարհին լրջօրէն սպառնացող խնդիրն էր, որ ծառայեցրին տարիներ առաջ Թալիբանին, Ալ Ղայիդային վերացնելու պատրուակով, Աֆղանստանն ու Իրաքը զաւթելու, աւերելու ու քարուքանդ անելու պատերազմները: Հեզբոլլահի պատրուակով նոյն յանցագործութեան թիրախը դարձաւ Լիբանանը, ուր Իսրայէլի կանոնաւոր բանակը նպատակայնօրէն քարուքանդ էր անում ամբողջ Լիբանանը: Նոյն ծրագրերով է զարգանում ներկայիս Իրանի ներքաղաքական իրավիճակը, որտեղ նախագահական «Դեմոկրատ» թեկնածուն իրանական աղբբեջանցի է եւ դէպքերի զարգացումներն ակնկալում են քաղաքացիական պատերազմով/ Նոր Ադրբեջանի ստեղծում տես վերելում/:

Այս ծրագրի դիւային շրջանակում է նաեւ, այսպէս կոչւած, «համաշխարհային տնտեսական ճգնաժամը», որը ոչ այլ ինչ է, քան ԱՄՆ-ի կողմից կատարուող ֆինանսական դիւերսիա: Քաղաքական կամային որոշումներով խարխուլեց համաշխարհային ֆինանսական ինստիտուտները (բանկերը): Կասկածի տակ դրեց տարադրամի փոխարժոյթային հնարաւորութիւնները: Արաբական Միացեալ Էմիրութիւնում (եւ ոչ միայն այնտեղ), դրեց դոլարի անսահմանափակ տպագրութիւն, որը կոչւած է խարխուլելու ազգային տնտեսութիւններն ամբողջ ռեգիոնում:

Այս բոլորը ակնյայտօրէն ներկայացնում է բազմաշերտ եւ բազմաբովանդակ հակամարտութիւններ խթանող եւ մեծ լարածութիւն կուտակող մի հսկայական պայթունավտանգ տարածք, որի զսպման եւ ներքին «պայթիւնների» խթանման բոլոր լծակներն ու մեխանիզմները դուրս են բերել ընդհանուր տարածքից:

Այսինքն, այս տարածքում ներառուած բոլոր երկրների ու ժողովուրդների կեանքը, կենսագործութիւնը, նրանց ներկան ու ապագան լիովին կախաւածութեան մէջ են դրուում արտաքին եւ ազդեցութեան կառոյցների

կամային ցանկութիւններից:

Ասել է թէ, նախատեսել եւ իրագործում են մօտ կէս միլիարդ մարդ ներքաշել պատերազմական գործողութիւնների թատերաբեմ, դրան հետեւող բոլոր արհաւիրքներով, զանգաւածային կորուստներով եւ ողբերգութիւններով»:

**Այս յօդուածում կան մի շարք խնդիրներ, որոնց ըմբռնումը ընթերցողի համար խրթին եւ բարդ է.**

**Առաջին հերթին կարելի է նկատել Թուրքիայի ցանկութիւնը ամերիկացի GOLBI-ի ծրագրի հիման վրայ: Այդ ծրագրի համաձայն, Յայաստանը պիտի Լեռնային Ղարաբաղը փոխի Չանգեզուրի հետ, որպէսզի Թուրքիան Նախիջեւանի վրայով միանայ Միջին Ասիական երկրներին: Դա նշանակում է միանգամայն խեղդել Յայաստանին եւ մէկընդմիջտ զրկել մի մեծ ու հզօր հարեւանից՝ Իրանից, որը ներկայումս տարեկան 40-45 հազար մեծ բեռնատար մեքենաներով ապրանք է հասցնում Յայաստան: Կայ նաեւ մի ուրիշ հարց. սահմանների փոփոխութիւնը այդքան էլ հեշտ բան չէ եւ դրա հետ են կապուած մեծ թուով քաղաքական եւ տնտեսական հարցեր:**

**Երկրորդ՝ դր երկիրն է նւաճել պայմանագրում նշուած տարածքները, որոնք Խորհրդային Միութեան փլուզումից յետոյ պատկանում են Յայաստանին եւ ղվ է ժառանգել այդ պայմանագիրը: 2011 թւականին արդեօք Յայաստանն էլ, որ մի անկախ երկիր է եղել, այդ հարցում դերակատար է եղել: Արդեօք 2009 թւականին Շւէյցարիայում ստորագրուած պայմանագիրը, որի պարտաւորութիւնները Թուրքիան չկատարեց, դեռեւս ուժի մէջ է: Արդեօք 1921 թւականի պայմանագիրն իր ուժի մէջ է, թէ ոչ:**

**Այդ հարցի պատասխանը կարելու է իւրաքանչիւր հայի, ինչպէս նաեւ ինձ համար, որպէս մի հայերէն հրատարակութեան արտօնատեր եւ պատասխանատու: Յարցն ուղղում են ՀՀ Արտգործնախարարին եւ Նրանից խնդրում են պատասխանելով դրան, պարզաբանի վերոյիշեալ կետերը ժողովրդին:**

# ՀԱՅ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԸ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՆ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԱՆԻԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆԸ

Գայանե Արտահանյան

Թուրքիայում գտնվող Հայաստանի հնագույն ու ամենագեղեցիկ մայրաքաղաք Անիում վերականգնման աշխատանքների առաջին փուլն ավարտված է, սակայն չորս եկեղեցիների վերանորոգման եռամյա ծրագրին հայ մասնագետների մասնակցության հարցը դեռևս լուծված չէ:

Արդեն մի քանի տարի է՝ թուրքական մամուլը թմբկահարում է, թե Թուրքիայի կառավարությունը հսկայական գումարներ է ներդնելու միջնադարյան Անի քաղաքը վերականգնելու համար: Սակայն միայն այս տարվա օգոստոսին սկսվեցին աշխատանքները, որոնք իրականացվում են հիմնականում Համաշխարհային հուշարձանների հիմնադրամի և ԱՄՆ Կոնգրեսի կողմից ստեղծված և պետքարտուղարության կազմում գործող «ԱՄՆ դեսպանների մշակութային պահպանության հիմնադրամի» շուրջ 1 մլն դոլարի ֆինանսական աջակցությամբ: Նախատեսվում են վերանորոգել ու ամրացնել հնագույն քաղաքի Մայր տաճարն ու կիսավեր Սուրբ Փրկչի եկեղեցին, բարեկարգել դեպի հուշարձաններ տանող ճանապարհներն ու հետազոտական պեղումներ իրականացնել: Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային խորհրդի՝ ԻԿՕՄՕՍ-Հայաստան կազմակերպության ղեկավար Գագիկ Գյուրջյանը համոզված է, որ այս անգամ հայ մասնագետների մուտքը վերականգնման հանձնաժողով հնարավոր կլինի: «Դեռ անցյալ տարի ԻԿՕՄՕՍ-ի գլխավոր ասամբլեայի նիստում բանաձև ընդունվեց, որի պահանջն էր Անիի վերանորոգման աշխատանքներում ընդգրկել միջազգային փորձագետների: Առայժմ խումբը չի ձևավորվել, սակայն ես գրեթե վստահ եմ, որ հայ մասնագետները կմասնակցեն հետագա աշխատանքներին», - «ԱրմենիաՆաուին» ասում է Գյուրջյանը: Գյուրջյանը կարծում է, որ հաջորդ տարի սպասվող աշխատանքներին հայ մասնագետների մասնակցությունն առավել կարևոր է, քանի որ առայժմ իրականացվել է ավելի շատ տեխնիկական աշխատանք, բարեկարգվել են ճանապարհները, հավաքվել ու համարակալվել են եկեղեցիների քանդված բեկորները: Դեռ հայտնի չէ, թե վերանորոգման ինչ աստիճան է նախատեսված, քանի որ Սուրբ Փրկչի եկեղեցին կիսով չափ քանդված է և պարզ չէ՝ ամբողջությամբ կվերականգնվի,

թե՞ միայն ամրացման աշխատանքներ կիրականացվեն: «Վերանորոգման միջամտության չափը կախված է բեկորների քանակից. միջազգային չափանիշներով՝ եթե բեկորները բավարարում են հուշարձանի գոնե 60-70 տոկոսը վերականգնելուն, ապա հնարավոր է ամբողջական վերականգնում, սակայն գուցե ավելի լավ կլինի չմիջամտել՝ աղավաղումներից խուսափելու համար», - ասում է Գյուրջյանը: Հայկական մշակութային ժառանգության նկատմամբ Թուրքիայի կառավարության ուշադրությունն ունի մի քանի նպատակ: Ինչպես թուրքագետներն են հաճախ շեշտում, դա արվում է զուտ քաղաքական շահադիտական նպատակներով՝ միջազգային հանրությանը ցույց տալու, թե թուրքերը որքան հոգատար են քրիստոնեական ժառանգության նկատմամբ: Սակայն ճարտարապետներն ու հնագետները դիտարկում են մեկ այլ նպատակ և՛ հայկականության հետքերը մաքրելու վտանգավոր միտումը: «Թուրքիայի կառավարությունը դեռևս 90-ականներից Անիում տարբեր պեղումներ, ուսումնասիրություններ է իրականացնում, սակայն այն, ինչ հայտնաբերվում է, շատ արագ ոչնչացվում է՝ կորցնելու համար հայկական հետքերը», - «ԱրմենիաՆաուին» ասում է Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամի նախագահ Սամվել Կարապետյանը: 1051 տարի առաջ հայոց 11-րդ մայրաքաղաքը հռչակված Անիի ավերակների թանգարանի մուտքի մոտ տեղեկատրվական հսկայական վահանակի երկարաշունչ տեքստում որևէ հիշատակություն հայերի մասին չկա, Անիի հայկական լինելու կամ պատմության ինչ-որ հատվածում հայերի մայրաքաղաք լինելու փաստի վերաբերյալ Անիում առկա այլ վահանակներում ևս որևէ տեղեկություն չկա: «Այս իրավիճակը ոչ միայն Անիում է, այլ Թուրքիայի գրեթե բոլոր հայկական հուշարձանների վահանակներին, դրանք ոչ միայն ուղղակի չեն նշում հայերի կապը, այլև հայկական անունները, թագավորների անունները նենգափոխում են՝ մոլորեցնելով թե օտարերկրյա այցելուներին և թե հենց իրենց ժողովրդին», - ասում է հուշարձանագետ Կարապետյանը: Հուշարձանագետը հիշում է, որ դեռ 2004 թվականին, երբ մեկնել էր Անի, Մայր տաճարի արևելյան ձակատին կից Կատրանիդե թագուհու և հարակից



ամբողջ դամբարանային համալիրում պեղումներ էին իրականացվում, ու հայտնաբերվել էին երկու հայ հոգևորականների տապանաքարերը՝ հայերեն արձանագրություններով: «Հաջորդ տարում այդ նույն տապանաքարերը գտանք ամբողջովին ջարդոտված, անգամ աճյունները հանված ու թափված էին շուրջբոլորը, և սա ոչ թե ուղղակի սարերում էր տեղի ունեցել, որ արդարանան, թե գանձագողերն են արել, այլ հսկայական պահակախմբի կողմից հսկվող թանգարանում», - ասում է Կարապետյանը: Սակայն նա հիշեցնում է, նաև, որ շատ հաճախ Անիի մասին խոսելիս հայերի «լեզուն կարճ է», քանի որ տարիներ շարունակ «նպաստել ենք Անիի կործանմանը»:

Հայաստան-Թուրքիա սահմանին՝ Ախուրյան գետի ափին, գտնվող Անիի ավերակների մոտ, հայաստանյան սահմանին մինչև 2004 թվականը օրական մի քանի անգամ պայթեցումներով շահագործվում էր տուֆի քարհանք, թուրքական կողմը պարբերաբար քննադատում էր՝ կոչ անելով դադարեցնել պայթեցումները: «Իրականում մենք սարսափելի վնասում էինք մեր իսկ պատմական ամենահարուստ ժառանգությանը: Պայթեցումներ անել այնտեղ, որտեղ Անիի ուսումնասիրող Նիկողայոս Մառը խստիվ արգելում էր անգամ հրացանի կրակոց արձակել, քանի որ այդ ծայնի ալիքը վնաս էր պատճառելու կիսավեր հուշարձաններին, սա մեր անտարբերության դրսևորումն է, որն առկա է նաև մեր բոլոր սրբատեղիներում», - ասում է Կարապետյանը: Մինչ Թուրքիայի կառավարությունը երկու տարի առաջ վերանորոգում և, մասնագետների կարծիքով, բավական լավ ամրացնում էր Անիի Տիգրան Հոնենցի եկեղեցին, հայ զբոսաշրջիկներն իրենց պարտքն էին համարում թողնել իրենց հետքը՝ հազարամյա որմնանկարների կողքին «անմահացնելով» իրենց անուններն ու այցելության տարեթվերը: «Այս ամենի կողքին մեր ծայնն արդեն թույլ է՝ աղավաղումների մասին բարձրաձայնելու համար», - ասում է Կարապետյանը, սակայն հավաստիացնում, որ պետք է հետամուտ լինեն վերանորոգման աշխատանքների պատշաճ որակ ապահովելու համար:

Աղբիւր՝ [www.armenianow.com](http://www.armenianow.com)



# ՓԱՐՔՈՐԸ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԱՐԶԱԶԵԻ



Փարքորը ֆրանսերէն բառ է, որը նշանակում է «ստեղաշարժման արւեստ»: Այդ մարզաձեւը ստեղծել է Վիետնամում ծառայած ֆրանսիացի զինուոր Ռէյմոն Բէլը: Դա բաղկացած էր մի շարք ճարպիկ շարժումներից, որոնց նպատակն է հիմնականում դժուար դրուսիւններում փայտել: Նրա տղան՝ Դէյվիդ Բէլը անելացնում է մի շարք նոր շարժումներ եւ դրանով յաջողում է փարքորը վերածել իսկական մարզաձեւի: Նա նաեւ կարողացաւ ստեղծել փարքորի յատուկ փիլիսոփայութիւնը՝ որպէս հոգին, միտքը եւ մարմինը միաւորելու միջոց:

Այսօր փարքորով զբաղւում են քաղաքային բնակարանային համալիրներում: Դա հիմնականում քաղաքային նեղ միջավայրերը յաղթահարելու մարզանք է: Թեհրանում եւս մեծ թուով երիտասարդներ զբաղւում են փարքորով եւ նոյնիսկ մերթ ընդ մերթ ունենում են իրենց տարեկան փառատօները: Արդեշիրն ու Ալին էլ Թեհրանցի երիտասարդներ են, որ զբաղւում են փարքորով: Նրանք մեզ ամիս տուեցին իրենց լուսանկարելով, մեր ընթերցողին անելի կենդանի պատկեր ներկայացնել թէ, ինչ է նշանակում այդ մարզաձեւը:

Լուսանկարները՝ Անի Ղեյիջեան





## Գարու ճաշ (սուպ)

### Պատրաստման եղանակ

Նախ գարին թրջել ջրի մէջ ու 2 ժամ թողնել, յետոյ ռանդած գազարով եփել. հաւի կամ մսի ջուրը անելացնել ու թողնել եփւի, տաք կաթը անելացնել ու խառնել: Նկատի ունենալ, որ կաթն անելացնել անպայման տաք վիճակում, որովհետեւ սառը կաթը կը կտրուիՔ Վերջում, նախքան մատուցելը, անելացնել հում սերը, ապա երեսը զարդարել մաղադանոսով (جعفرى):

*ԲԱՐԻ ԱՆՈՐԺԱԿ*

### ԲԱՂԱԴՐՈՒԹԻՒՆ

գարի	1 կապ
գազար (ռանդած)	կէս կիլօ
